բիզնեսի
բարեվարքության
ակումբ

Կորպորատիվ
Կառավարման
Կենտրոն

20
Տարի

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
1	**Ազգերի ինքնորոշման իրավունք**	Ժողովուրդների հիմնարար իրավունք, ազգերի պետական կազմավորման իրավակարգի արտաքին քաղաքականության, մշակութային, կրոնական, տնտեսական հարցերն ինքնուրույնաբար տնօրինելու, ընդհուպ մինչև այլ ազգերից անջատվելու և անկախ պետություն կազմելու իրավունք: Այն ժամանակակից միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքն է: Ազգերի ինքնորոշման իրավունքն ամրագրված է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Գլխավոր ասամբլեայի հռչակագրերում, Մարդու իրավունքների միջազգային համաձայնագրերում: Համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության (հոդված 1-ին կետ 2) և Մարդու իրավունքների համաձայնագրի (հոդված 1-ին, կետ 1)՝ ինքնորոշման իրավունքը հռչակվում է որպես միակողմանի գործողության հնարավորություն՝ ուղղորդված ժողովրդի ազատությանը և վարչական տարածքի որոշակի քաղաքական կարգավիճակին, առանց որևէ ենթատեքստի և սահմանափակման: Այն հայտարարում է, որ համաձայն ժողովուրդների հավասար իրավունքների և արդարացի հավասարության հնարավորությունների՝ իրավունք ունեն ազատորեն ընտրել անկախություն և միջազգային քաղաքական կարգավիճակ առանց արտաքին հարկադրման և միջամտության:
2	**Ազդարարում**	Կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հանրային և (կամ) կազմակերպության շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդում:
3	**Ազդեցության ոլորտ**	Շղթա, որտեղ ազդեցությունը կրճատվում է շղթայի մեծացման հետ մեկտեղ: Ամենափոքր շղթան ընկերության հիմնական գործունեությունն է: Հաջորդ շրջանն արտացոլում է մատակարարների շղթան: Այստեղ ազդեցության վերահսկողությունը թուլանում է, սակայն որոշ դեպքերում այն կարող է լինել զգալի: Երրորդ շրջանը ներառում է ընկերության հարաբերությունները համայնքի հետ:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		Ազդեցության վերջին շրջանը վերաբերում է պետական քաղաքականության վերաբերյալ երկխոսության մեջ ընկերության ներգրավվածությանը:
4	**Ածխածնի գնագոյացում**	Ածխածնային աղտոտման դիմաց վճարվող գին է կամ հարկ: Այն արդյունավետ միջոց է նվազեցնելու CO_2-ի արտանետումները և դրանով իսկ սահմանափակելու գլոբալ տաքացումը: Ածխածնի գները կարող են դրսևորվել հարկի կամ «արտանետման քվոտաների» առքուվաճառքի ձևով:
5	**Ածխածնի հավաքում ու պահեստավորում**	CO_2 թափոնների հավաքման և երկրաբանական պահեստավայրում տեղավորման գործընթաց՝ մթնոլորտ դրանց ներթափանցումը և գլոբալ տաքացումը կանխելու համար: Ածխածնի հավաքման և պահեստավորման գործընթացում օգտագործվում են մի շարք տեխնոլոգիաներ, այդ թվում՝ կլանում, քիմիական շրջանառությամբ այրում և մեմբրանային գազերի տարանջատում: Եթե ածխածնի հավաքումը տասնյամյակներ շարունակ կիրառվող պրակտիկա է, ապա դրա երկարաժամկետ պահեստավորումը կլիմայի փոփոխության մեղմման ոլորտում համեմատաբար նոր երևույթ է:
6	**Ածխածնի ոտնահետք**	Որոշակի ժամանակահատվածում անհատի, ընկերության կամ երկրի կողմից գեներացված ջերմոցային գազերի արտանետումներ: Եզրույթը հիմնականում վերաբերում է ածխաթթու գազի արտանետմանը, սակայն այն ներկայումս ներառում է նաև գլոբալ տաքացմանը նպաստող ջերմոցային բոլոր գազերը: Խոսքը վերաբերում է առավել տարածված գազերի արդյունաբերական արտանետումներին, ինչպիսիք են՝ ծծմբի երկօքսիդը, ազոտի օքսիդը և մեթանը: Այս իմաստով կարելի է կիրառել նաև «ջերմոցային գազերի ոտնահետք» եզրույթը:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
7	**Ածխածնի չեզոքություն**	Գործընթաց, որով կազմակերպությունները գնահատում են իրենց գործունեության արդյունքում մթնոլորտ արտանետված ածխաթթու գազը և պլանավորում այդ քանակությունը փոխհատուցելու ուղիներ՝ ածխածնի զրոյական արտանետումներ ունենալու նպատակով:
8	**Ապակարբոնիզացում**	Մթնոլորտում ածխածնի արտանետումների, հատկապես ածխաթթու գազի (CO_2) նվազեցման գործընթաց, որի նպատակն է էներգիայի անցման միջոցով հասնել ցածր արտանետումների համաշխարհային տնտեսության և կլիմայի չեզոքության:
9	**Առաջնորդություն**	Բնական սոցիալ-հոգեբանական գործընթաց, անձի կարողություն ազդելու անհատների կամ նրանց խմբի վարքի վրա՝ հանուն կազմակերպության նպատակների իրականացման: Առաջնորդումը համատեղ աշխատանքի ամբողջականացման, կազմակերպության ներուժի ավելացման կառուցակարգ է:
10	**Ատելության խոսք**	Հանրային (հասարակական) խոսքի դրսևորում, որն արտահայտում է ատելություն կամ խրախուսում է բռնություն անձի կամ անձանց խմբի նկատմամբ՝ պայմանավորված այնպիսի առանձնահատկություններով, ինչպիսիք են անձի ռասան, սեռը, կրոնական պատկանելությունը, էթնիկական խումբը, գենդերային ինքնությունը, մաշկի գույնը, հաշմանդամությունը և այլն: Այն ընդգրկում է արտահայտությունների բազմաթիվ ձևեր, որոնք տարբեր պատճառներով տարածում, դրդում, խթանում կամ արդարացնում են անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելությունը, բռնությունը և խտրականությունը: Ատելության խոսքը լուրջ վտանգ է ներկայացնում ժողովրդավարական հասարակության, մարդու իրավունքների պաշտպանության և օրենքի գերակայության ապահովման տեսանկյունից: Վերջինիս նկատմամբ անտարբերության դրսևորումները կարող են հանգեցնել բռնությունների և բախումների լայն մասշտաբների: Այս իմաստով ատելության խոսքն անհանդուրժողականության ծայրահեղ դրսևորում է, որը նպաստում է ատելության հողի վրա հանցագործությունների առաջացմանը:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
11	**Արդյունավետ կատարողական**	Լավ կառավարման վերջնարդյունք, երբ կազմակերպությունը հավատարիմ է իր նպատակին, իր շահակիցների համար ձևավորում է արժեք, ապահովում է իր համապատասխանությունը կազմակերպության քաղաքականություններին ու շահակիցների սպասումներին:
12	**Արժանիների իշխանություն (մերիտոկրատիա)**	Կառավարման սկզբունք, համաձայն որի ղեկավար պաշտոնները պետք է զբաղեցնեն առավել ընդունակ մարդիկ՝ անկախ սոցիալական ծագումից, ֆինանսական կարողությունից և կապերից: Մեծ մասամբ կիրառվում է երկու իմաստով: Եզրույթի առավել տարածված իմաստը ենթադրում է՝ մեկնարկային պայմանների ստեղծում օբյեկտիվորեն օժտված և աշխատասեր մարդկանց համար, որպեսզի նրանք հնարավորություն ունենան հասարակական բարձր դիրք գրավել ազատ մրցակցության պայմաններում:
13	**Արժեք**	Կազմակերպության որոշումների և գործունեության առաջնահերթությունները սահմանող դրական, շահադրդող ուղենիշ:
14	**Արժեքի ստեղծում/արժեստեղծում**	Գործընթաց, որը կազմակերպության գործունեության ազդեցությամբ պայմանավորված՝ հանգեցնում է կապիտալի աճի, նվազման կամ փոխակերպման:
15	**Արժեքի վրա հիմնված կառավարում**	Կառավարման մոտեցում, որի դեպքում ընկերությունների կառավարումը հիմնվում է արժեքի: Մոտեցման բաղադրիչներն են. 1. արժեքի ստեղծումը՝ ինչպես է ընկերությունը ավելացնում կամ մաքսիմալացնում իր ապագա արժեքը (նույնացվում է ռազմավարության հետ), 2. արժեքների կառավարում՝ լավ կառավարում, փոփոխությունների կառավարում, կորպորատիվ մշակույթ, հաղորդակցում և առաջնորդություն, 3. արժեքի չափում՝ գնահատում:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
16	**Արհեստական բանականություն**	Մեքենաների բանականություն՝ ի տարբերություն մարդու և կենդանիների «բնական» բանականության, որին հատուկ են զգացմունքները և հուզականությունը: Մեքենաների բանականությունը ներառում է ալգորիթմներ, նեյրոնային ցանցեր, մեքենայական ուսուցում, պլանավորում, ռոբոտաշինություն և այլն: Եզրույթը կիրառվում է, երբ մեքենան իրականացնում է «ճանաչողական» գործառույթներ, ինչպես, օրինակ՝ «սովորելը» և «խնդիր լուծելը»:
17	**Աուդիտ արտաքին**	Իրավասու, որակավորված, պրոֆեսիոնալ և անկախ աուդիտորի կողմից ընկերության ֆինանսական և հաշվապահական գրառումների և օժանդակ փաստաթղթերի ուսումնասիրություն և ստուգում: Աուդիտի նպատակը հավաստելն է, որ գրառումները համապատասխանում են հաշվետվության և հաշվապահական հաշվառման կիրառելի պահանջներին, զերծ են խարդախության կամ սխալի պատճառով ծագած էական խեղաթյուրումներից, ինչպես նաև ճշգրտորեն և արդարացիորեն ներկայացնում են ընկերության ֆինանսական վիճակը:
18	**Աուդիտ ներքին**	Անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ, որն ուղղված է կազմակերպության գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է կազմակերպությանը հասնել իր նպատակներին՝ կազմակերպության ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով: Ներքին աուդիտն իրականացվում է հետևյալ սկզբունքների համաձայն՝ 1) անկախություն. 2) օբյեկտիվություն. 3) կարողունակություն.

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		4) անկողմնակալություն. 5) գաղտնիություն:
19	**Աուդիտոր**	Աուդիտորական կազմակերպության մասնագետ, որը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնելու համար: Նա չպետք է ունենա անձնական շահագրգռվածություն աուդիտի ենթարկվող կազմակերպությունում և չպետք է մասնակցի ֆինանսական հաշվետվությունների մշակման գործընթացին: Աուդիտորից պահանջվում է անկողմնակալ դատողություն առ այն, որ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները և հաշվապահական հաշվառման գրառումները զերծ են էական խեղաթյուրումներից և արդարացիորեն արտացոլում են կազմակերպության ֆինանսական վիճակի պատկերը:
20	**Բազմազանություն**	Լավ կառավարման սկզբունք, որ յուրաքանչյուրին դարձնում է յուրահատուկ: Դա տարբերությունների համակցությունն է: Բազմազանության առաջնային չափումները ներառում են տարիքը, էթնիկ պատկանելությունը և մշակույթը, սեռը, ռասան, կրոնը, կարողությունները: Բազմազանությունը խթանում է մշակութային, տնտեսական և սոցիալական կենսունակությունը և նորարարությունը: Հասարակությունները բարգավաճում են, երբ կարողանում են հանդուրժել և ընդունել աշխարհի բազմազանությունը:
21	**Բաժնետերերի բանաձև**	Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկայացվող բաժնետերերին մտահոգող հարցի վերաբերյալ առաջարկ: Բաժնետերերն այդ կերպ ընկերությունից պահանջում են անդրադառնալ իրենց մտահոգող խնդրին՝ գործադիր թիմի անհամաձայնության դեպքում: Վերջին տարիներին բանաձևերում առաջարկվել է պարզաբանել կլիմայի փոփոխության նկատմամբ ընկերության խոցելիությունը և համապատասխանությունը Փարիզյան համաձայնագրին:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
22	**Բաժնետիրական համաձայնագիր**	Բաժնետոմսերով հավաստվող իրավունքների և (կամ) բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների իրականացման առանձնահատկությունների մասին պայմանագիր: Բաժնետիրական համաձայնագրով կողմերը պարտավորվում են որոշակի ձևով իրականացնել բաժնետոմսերով հավաստվող իրավունքները և (կամ) բաժնետոմսերի նկատմամբ իրավունքները կամ ձեռնպահ մնալ այդ իրավունքների իրականացումից: Դրանով կարող է նախատեսվել բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկության կարգ կամ քվեարկությունն այլ անձանց հետ համաձայնեցնելու, այլ անձանց ցուցումներով քվեարկելու, բաժնետոմսերը նախապես սահմանված գնով և (կամ) պայմանագրով սահմանված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ձեռք բերելու և (կամ) օտարելու, մինչև պայմանագրով հանգամանքների ի հայտ գալը բաժնետոմսերի օտարումից ձեռնպահ մնալու, ինչպես նաև ընկերության բաժնետոմսերը նախապես սահմանված գնով և (կամ) պայմանագրով սահմանված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ձեռք բերելու և (կամ) օտարելու, մինչև պայմանագրով հանգամանքների ի հայտ գալը բաժնետոմսերի օտարումից ձեռնպահ մնալու, ինչպես նաև ընկերության կառավարման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման հետ կապված այլ համաձայնեցված գործողություններ իրականացնելու պարտավորությունը: Բաժնետիրական համաձայնագիրը կնքվում է գրավոր: Բաժնետիրական համաձայնագրի կողմ կարող են լինել ընկերությունը, բաժնետերերը, ինչպես նաև այն անձինք, որոնք բաժանորդագրվում են ընկերության բաժնետոմսերին:
23	**Բարեվարքություն**	Կազմակերպական մշակույթ, լավ կառավարման սկզբունք, համաձայն որի՝ կազմակերպությունն իր գործունեությունը կազմակերպում է հաշվետվողականության, արհեստավարժության և էթիկայի նորմերի հիման վրա՝ բացառելով կոռուպցիայի որևէ դրսևորում:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
24	**Բացահայտում**	Կազմակերպության պարտավորություն տրամադրելու էական, շուկայի վրա ազդեցություն գործող տեղեկատվություն մի շարք կողմերին, այդ թվում՝ կարգավորող մարմիններին և հանրությանը, անյպիսի պահանջներին կամ չափանիշներին համապատասխան, որպիսիք են հաշվապահական չափանիշները և ինքնակարգավորվող պայմանագրերը: Բացահայտումը բարձրացնում է ընկերության թափանցիկությունը, որը կորպորատիվ կառավարման հիմնարար սկզբունքներից է:
25	**Գաղտնի համաձայնություններ**	Հանրային կամ մասնավոր ոլորտում գաղտնի պայմանավորվածություն այնպիսի գործողությունների վերաբերյալ, որոնք նպատակ են հետապնդում ստանալ ֆինանսական շահ խաբեությամբ կամ խարդախությամբ: Գաղտնի համաձայնությունները կանխելու համար կազմակերպությունները պետք է ձեռնարկեն համապատասխանության (compliance) միջոցներ:
26	**Գենդերային արդարություն**	Կանանց և տղամարդկանց նկատմամբ արդարացի լինելու գործընթաց: Արդարությունն ապահովելու համար հաճախ պետք է առկա լինեն ռազմավարություններ և միջոցառումներ՝ փոխհատուցելու կանանց պատմական և սոցիալական հնարավորությունների պակասը, որոնք խանգարում են կանանց և տղամարդկանց աշխատել հավասար մրցակցային պայմաններում: Արդարությունը հանգեցնում է հավասարության:
27	**Գենդերային կարծրատիպ**	Մշակույթում ձևավորված համեմատաբար կայուն, ընդհանրացված պատկերացումներ կանանց ու տղամարդկանց և, համապատասխանաբար, նրանց վարքի վերաբերյալ: Դրանք վաղ են յուրացվում, ավելի վաղ, քան երևան է գալիս սեփական կարծիքը, և դառնում են չգիտակցված գաղափարախոսություն:
28	**Գենդերային հավասարություն**	Հավասար իրավունքներ, պարտականություններ և հնարավորություններ կանանց և տղամարդկանց, տղաների և աղջիկների համար: Հավասարությունը չի նշանակում, որ կանայք և տղամարդիկ դառնալու են նույնը, այլ այն, որ կանանց և տղամարդկանց իրավունքները,

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		պարտականությունները և հնարավորությունները կախված չեն լինելու այն հանգամանքից՝ ծնվել են նրանք տղամարդ, թե կին:
29	**Գլոբալ տաքացում**	Երկրի կլիմայական համակարգի միջին ջերմաստիճանի բարձրացում: Ջերմաստիճանի գլոբալ աճի արդյունքներն են ծովի մակարդակի բարձրացումը, մթնոլորտային տեղումների քանակի և բնույթի փոփոխությունը, անապատների աճը: Տաքացումը բերում է էքստրեմալ եղանակային երևույթների հաճախության մեծացմանը, ներառյալ՝ տապի ալիքները, հեղեղները և երաշտները, օվկիանոսի թթվեցումը, ջերմաստիճանային ռեժիմի խախտմամբ կենսաբանական տեսակների ոչնչացումը: Մարդկության համար կարևոր հետևանք է նաև սննդային ապահովության անվտանգությունը՝ բերքատվության վրա բացասական ազդեցության պատճառով: Գլոբալ տաքացման հակազդեցության քաղաքականությունը ներառում է դրա մեղմացումը ջերմոցային գազերի կրճատման հաշվին, ինչպես նաև դրա ազդեցության հետ համակերպումը:
30	**Գործարար մոդել**	Ձեռնարկատիրական գործունեության միջոցով ռեսուրսները և հարաբերություններն արտադրանքի փոխակերպելու համակարգ, որն ուղղված է կազմակերպության ռազմավարական նպատակների իրագործմանն ու արժեքի ստեղծմանը կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում:
31	**Դոու Ջոնսի կայունության համաթիվ**	Կայունության համաթիվ, որը տնտեսական, էկոլոգիական, սոցիալական չափանիշների տեսանկյունից հետևում է գլոբալ առաջատար ընկերությունների բաժնետոմսերի դինամիկային:
32	**Եվրոպական Միության Տաքսոնոմիա (Կարգաբերում)**	ԵՄ կարգավորում, որը նպատակ ունի պաշտպանել ներդրողներին կանաչ լվացումից (գրինվոշինգից), ուղղորդել ընկերություններին կայուն գործունեության և խթանել կայուն

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		ներդրումները: Այն մշակվել է Կանաչ գործարքի համատեքստում կայուն տնտեսական գործունեությունը հստակեցնելու համար: Տնտեսական գործունեությունը կայուն է, եթե միտված է Կարգաբերման նպատակներից առնվազն մեկին, սակայն չի խոչընդոտում ցանկացած այլ նպատակի: Կարգաբերմամբ սահմանված կլիմայական նպատակներն են՝ 1. Կլիմայի փոփոխության հետևանքների մեղմում. 2. Կլիմայի փոփոխությանն ադապտացում. 3. Ջրային և ծովային ռեսուրսների կայուն օգտագործում և պաշտպանություն. 4. Անցում շրջանաձև տնտեսության. 5. Շրջակա միջավայրի աղտոտման կանխում և վերահսկում. 6. Կենսաբազմազանության և էկոհամակարգերի պաշտպանություն և վերականգնում:
33	**Եվրոպական կանաչ գործարք**	ԵՄ ռազմավարություն, որը միտված է Փարիզի համաձայնագրով սահմանված կլիմայական չեզոքության կյանքի կոչմանը: Գործարքը նպատակ ունի ԵՄ-ը փոխակերպել ժամանակակից և մրցունակ տնտեսությամբ բարեկեցիկ հասարակության: Կանաչ գործարքը ենթադրում է շրջակա միջավայրի, արդյունաբերության, արտադրության և սպառման, տրանսպորտի, էներգիայի, պարենի, շինարարության, հարկային և սոցիալական արտոնությունների ոլորտներում քաղաքականությունների վերաիմաստավորում, մասնավորապես՝ 1. Համապատասխան օրենսդրական ակտերի վերանայում և նորերի ընդունում. 2. Կլիմայի փոփոխության անխուսափելի ազդեցությանն ադապտացված հասարակության ձևավորում.

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		3. Պարենային անվտանգության և հասանելիության ապահովում, պարենի կայուն արտադրության և սպառման խթանում. 4. Պահպանվող տարածքների ընդլայնում և դեգրադացված էկոհամակարգերի վերականգնում. 5. Անցում շրջանաձև տնտեսության և նոր աշխատատեղերի ստեղծում. 6. Արդյունաբերության թվայնացում. 7. Էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործման խթանում, միասնական և թվայնացված էներգիայի շուկայի ձևավորում. 8. Շինությունների էներգետիկ արդյունավետության բարձրացում և շինարարական հումքի անվտանգության ապահովում. 9. Մրցունակ, անվտանգ, մատչելի և հասանելի տրանսպորտային համակարգի ստեղծում. 10. Արտանետված թափոնների հեռացում և արտանետման հիմնական աղբյուրների վերացում. 11. Անցման նկատմամբ առավել խոցելի ոլորտներին և տարածաշրջաններին ֆինանսական և տեխնիկական աջակցության տրամադրում:
34	**Երրորդ կողմ**	Անձ, որը գտնվում է կազմակերպության հսկողության կամ ազդեցության տակ և/կամ գործում է կազմակերպության անունից կամ ի շահ կազմակերպության: Երրորդ կողմ են համարվում միջնորդները, գործակալները, համատեղ ձեռնարկության մասնակիցները, կապալառուները և ենթակապալառուները, մատակարարները, առաքիչները և այլ միջնորդները:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
35	**Էական/էականություն**	Երևույթը/առարկան էական է, եթե այն կարող է էական ազդեցություն ունենալ կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ հատվածում արժեք ստեղծելու կազմակերպության ունակության վրա: Տեղեկատվությունն էական է, եթե այն բացառելը, խեղաթյուրելը կամ թաքցնելը կարող է ազդել կոնկրետ հաշվետու կազմակերպության ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների հիմնական օգտագործողների կայացրած որոշումների վրա: Էականությունը կախված է տեղեկատվության բնույթից կամ մեծությունից, կամ երկուսն էլ միասին: Տեղեկատվության էականության գնահատումը պահանջում է հաշվի առնել կազմակերպության հանգամանքները:
36	**Էականություն կրկնակի**	Հայեցակարգ, որը ներդրվել է ԵՄ հանձնաժողովի կողմից՝ որպես Ոչ ֆինանսական հաշվետվությունների հրահանգի (NFRD) ոչ պարտադիր ուղեցույցի մաս: Կրկնակի էականության տեսանկյունից՝ ESG-ի գործոնները ստեղծում են ռիսկեր և հնարավորություններ, որոնք էական են ֆինանսական կամ ազդեցության տեսանկյունից, կամ երկուսն էլ միասին: Ընկերությունները պետք է զեկուցեն, թե ինչպես են կայունության խնդիրներն ազդում իրենց բիզնեսի վրա և հասարակության ու շրջակա միջավայրի վրա իրենց ազդեցության մասին:
37	**Էականության գնահատում**	Ապացույցների վրա հիմնված, համակարգված գնահատում, որն անցկացվում է ամեն տարի՝ նախքան հաշվետվության պատրաստումը: ESG-ի և ֆինանսական խնդիրները կապակցող կազմակերպություններն օգտագործում են էականության գնահատումները՝ որպես իրենց ռազմավարական պլանավորման, բյուջեի բաշխման, ռիսկերի կառավարման և տարեկան հաշվետվությունների հիմք:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
38	**Էթիկական վարքագիծ**	Լավ կառավարման վերջնարդյունք, երբ կազմակերպությունը գործում է ճիշտ կամ լավ վարքագծի սկզբունքներին համապատասխան՝ կոնկրետ իրավիճակի համատեքստում և վարքագծի միջազգային նորմերի համաձայն, ներառյալ՝ էթիկական մշակույթի դրսևորումը, հաշվետվողականությունը՝ իր կատարողականի և ռեսուրսների կառավարման վերաբերյալ ճշգրիտ ու ժամանակին հաշվետվություն ներկայացնելու միջոցով, շահակիցների նկատմամբ արդար վերաբերմունքը և նրանց ներգրավվածության ապահովումը, իր պարտավորությունները և պարտականությունները կատարելիս ազնվությունն ու թափանցիկությունը, որոշումներ կայացնելիս քաջատեղյակությունը և բարեվարքությունը:
39	**Թափանցիկություն**	Լավ կառավարման սկզբունք, որը ցույց է տալիս, թե որքանով է կազմակերպությունը բաց և պատրաստ իր մասին բացահայտել այժմէական, արժանահավատ, ամբողջական տեղեկատվություն:
40	**Ժողովրդավարություն**	Ժողովրդի իշխանություն, քաղաքական ռեժիմ, որի հիմքում ընկած է գործընթացի կամ նրա որևէ մակարդակի վրա մասնակիցների հավասար մասնակցությամբ խմբային որոշումների կայացման ընթացակարգը: Ժողովրդավարության հիմնական հատկանիշներն են՝ • Առաջնորդների նշանակումը տեղի է ունենում ազնիվ և մրցակցային ընտրությունների միջոցով: • Ժողովուրդը հանդիսանում է լեգիտիմ իշխանության միակ աղբյուրը: • Հասարակությունը հանուն իր շահերի բավարարման և ընդհանուր բարեկեցության իրականացնում է ինքնակառավարում: Ժողովրդավարության հետ փոխկապակցված հիմնական արժեքներն են օրինականությունը, քաղաքական և սոցիալական

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		հավասարությունը, ազատությունը, ինքնորոշման իրավունքը, մարդու հիմնարար իրավունքները և այլն:
41	**Ինտեգրացված հաշվետվականություն**	Կայունության և ֆինանսական նպատակների ու արդյունքների հաղորդումը մեկ հաշվետվության մեջ՝ դրանք կապելով միմյանց հետ: Ֆինանսական և ոչ ֆինանսական տվյալներին տրվում են հավասար կշիռ, հավասարապես հաշվի են առնվում ներդրողների և այլ շահակիցների շահերը: Ինտեգրացված հաշվետվականությունը հիմնվում է ինտեգրացված մտածողության վրա, որի արդյունքը ժամանակի ընթացքում արժեքի ստեղծման մասին կազմակերպության ինտեգրացված պարբերական հաշվետվությունն է և արժեքի ստեղծման հանգամանքների վերաբերյալ հարակից հաղորդակցությունը:
42	**Ինտեգրացված մտածողություն**	Կազմակերպության կողմից իր տարբեր գործառնական, ֆունկցիոնալ միավորների և իր կողմից օգտագործվող կամ իր ազդեցության ներքո գտնվող կապիտալների միջև եղած կապերի ակտիվ դիտարկում: Ինտեգրացված մտածողությունը հանգեցնում է ինտեգրացված որոշումների կայացման և գործողությունների, որոնք միտված են կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ հատվածում արժեքի ստեղծմանը:
43	**Լավ կառավարում**	Մարդահեն համակարգ, որի օգնությամբ կազմակերպությունները կառավարվում, վերահսկվում և պատասխանատվություն են կրում իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար: Ըստ էության, այն ներառում է՝ • կազմակերպության նպատակների ու արժեքների սահմանումը և դրանց նկատմամբ նվիրվածության ցուցաբերումը, • արժեքի ձևավորման վերաբերյալ կազմակերպության մոտեցումները, • արժեքի ձևավորմանը միտված ռազմավարությամբ առաջնորդումը,

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		• կառավարման կառուցվածքը, որը երաշխավորում է, որ որոշում կայացնող անձինք օժտված են համապատասխան իրավասություններով, կարողություններով, տիրապետում են իրենց պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ ռեսուրսների, • վերահսկման համակարգը, որը երաշխավորում է կառավարման կառուցվածքի և կազմակերպության նպատակների համաչափությունը, • իրավասությունների արդյունավետ պատվիրակումը հետևյալ պայմանների պահպանմամբ՝ ակնկալվող արդյունքների քննարկում, ճշգրտում և համաձայնեցում, անհրաժեշտ ռեսուրսներով ապահովում, իրավասություններին համապատասխան պատասխանատվության սահմանում, արդյունքների և գործընթացների վերաբերյալ տեղեկատվության և ապացույցների ներկայացում առ այն, որ ձեռնարկված գործողությունները ողջամիտ են և տեղին:
44	**Խաղաղություն բացասական**	Ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառման արդյունքում բացահայտ բռնության կամ հակամարտության բացակայություն: Միայն հակամարտության բացակայությունը բավարար չէ լիարժեք խաղաղության հաստատման համար. հակամարտության կասեցումը, առանց հիմքային պատճառների վերացման, հանգեցնում է հակամարտության կրկնմանը: Այս համատեքստում հատուկ նշանակություն ունի դրական խաղաղությունը, որի նպատակը շարունակական խաղաղության նախադրյալների ձևավորումն է: «Բացասական խաղաղությունը» և «դրական խաղաղությունը» տարբեր, բայց փոխկապված եզրույթներ են: ՄԱԿ-ի Կայուն զարգացման 16-րդ նպատակը ենթադրում է ոչ միայն բռնության բոլոր ձևերի վերացում, այլև բռնության կանխման նպատակով ինստիտուտների ամրապնդում: Բացասական խաղաղությունը և դրական խաղաղությունը փոխազդում են հետևյալ կերպ. 1. Դրական խաղաղությունը ձևավորվում է բացասական խաղաղության հիմքի վրա:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		2. Բացասական խաղաղությունը միտված է բռնության բացահայտ ձևերի վերացմանը, դրական խաղաղությունը՝ բռնության հիմքերի հաղթահարմանը: 3. Բացասական խաղաղությունը միտված է հակամարտությունների կարճաժամկետ կարգավորմանը, դրական խաղաղությունը՝ երկարաժամկետ հեռանկարում հասարակության կյանքի բարելավմանը: 4. Բացասական խաղաղությունն ունի «բուժիչ», դրական խաղաղությունը՝ «կանխարգելիչ» նշանակություն: Խաղաղության հասնելու ուղենիշների ձևավորման նպատակով Տնտեսագիտության և խաղաղության ինստիտուտը (IEP) մշակել է Խաղաղության գլոբալ համաթիվը (GPI): Համաթիվը ցույց է տալիս 163 երկրների բացասական խաղաղության մակարդակը հետևյալ տիրույթներում. 1. Երկրի մասնակցությամբ կոնֆլիկտի մասշտաբները, 2. Հասարակության անվտանգության մակարդակը, 3. Երկրի ռազմականացման մակարդակը:
45	**Խաղաղություն դրական**	Հայեցակարգ, որն ուսումնասիրում է խաղաղ հասարակությունների ձևավորման և բարգավաճման նախադրյալները: Համաձայն այս հայեցակարգի՝ խաղաղությունն ավելին է, քան պատերազմի և բռնության բացակայությունը (բացասական խաղաղություն): Բռնության հիմքերի վերացումը, ինչպես նաև ներդաշնակության և կայունության հաստատումն ապահովում են շարունակական խաղաղություն և մարդկային ներուժի զարգացում: Տնտեսագիտության և խաղաղության ինստիտուտն (IEP) առանձնացրել է դրական խաղաղության հետևյալ հիմնարար բաղադրիչները՝ 1. Ռեսուրսների արդարացի բաշխում,

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		2. Տեղեկատվության ազատ հոսք, 3. Լավ հարաբերություններ հարևանների հետ, 4. Մարդկային կապիտալի զարգացման բարձր մակարդակ, 5. Մարդու իրավունքների նկատմամբ հարգանք, 6. Կոռուպցիայի ցածր մակարդակ, 7. Առողջ գործարար միջավայր, 8. Արդյունավետ գործող կառավարություն: Բաղադրիչների բարելավումը նպաստում է ոչ միայն խաղաղության ամրապնդմանը, այլև օրենքի գերակայությանը, տնտեսական բարեկեցությանը, սոցիալական արդարությանը, համերաշխությանը և շրջակա միջավայրի պաշտպանությանը: Բաղադրիչների գնահատման և համադրման արդյունքում ձևավորվում է Դրական խաղաղության համաթիվը (PPI), որը հնարավորություն է տալիս բացահայտել խաղաղության ուղին ընտրած երկրների զարգացման նախադրյալները:
46	**Խմբային մտածողություն**	Մտածողության ձև, որի արտահայտչամիջոցներից են թիմում անհատների խորը համախմբվածությունը, միաձայնության ձգտումը, որը գերակայում է այլընտրանքներն իրատեսորեն գնահատելու մոտեցումներին:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
47	**Խտրականություն զբաղվածության ոլորտում**	Աշխատողների հավաքագրման, աշխատանքի ընդունման գործընթացներում, աշխատանքային կամ զբաղվածության պայմաններում ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն՝ պայմանավորված աշխատանքի պրոֆեսիոնալ պահանջներից չբխող անձնային հատկանիշներով, որոնք զրոյացնում կամ խաթարում են աշխատանքի կամ մասնագիտության մեջ հնարավորությունների կամ վերաբերմունքի հավասարությունը: Աշխատանքի պրոֆեսիոնալ պահանջները վերաբերում են տվյալ աշխատանքը կատարելու համար անհրաժեշտ մասնագիտական իրական որակավորումներին:
48	**Կազմակերպական նպատակ**	Կազմակերպության գոյության հիմնապատճառը, որ պետք է արտացոլի կազմակերպության մտադրությունները շրջակա միջավայրի, հասարակության և շահակիցների նկատմամբ: Հստակ սահմանված նպատակը՝ • շահակիցների համար հստակություն է ապահովում կազմակերպության մտադրությունների, վարքագծի, որոշումների և գործողությունների առումով, • օգնում է շահակիցներին ընկալելու կազմակերպության ինքնությունը, • նպաստում է ամրագրել կազմակերպության արժեքները, • հիմքեր է նախապատրաստում շահակիցների կողմից կազմակերպության արդյունքներին և նպատակներին հասնելու կարողությունը գնահատելու համար և այլն:
49	**Կայուն զարգացման նպատակներ (ԿԶՆ)**	Միավորված ազգերի կազմակերպության կողմից 2015թ.-ին ընդունված 17 նպատակներ, որոնց կոչն է մինչև 2030թ.-ը վերացնել աղքատությունը, պաշտպանել շրջակա միջավայրը և կլիման, ինչպես նաև ապահովել, որ աշխարհում բոլոր մարդիկ ապրեն խաղաղ և բարեկեցիկ կյանքով: Կայուն զարգացման նպատակները՝ 1. աղքատության վերացումը,

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		2. սովի վերացումը, 3. ամուր առողջությունը և բարեկեցությունը, 4. որակյալ կրթությունը, 5. գենդերային հավասարությունը, 6. մաքուր ջուրը և սանիտարական պայմանները, 7. մատչելի և մաքուր էներգիան, 8. արժանապատիվ աշխատանքն ու տնտեսական աճը, 9. արդյունաբերությունը, նորարարությունն ու ենթակառուցվածքները, 10. անհավասարությունների կրճատումը, 11. կայուն քաղաքները և համայնքները, 12. պատասխանատու սպառումը և արտադրությունը, 13. գործողությունները հանուն կլիմայի, 14. կյանքը ջրի տակ, 15. կյանքը ցամաքում, 16. խաղաղությունը, արդարությունը և ամուր հաստատությունները, 17. գործընկերությունները հանուն նպատակների:
50	**Կայուն զարգացման ֆոնդեր (ԿԶՆ ֆոնդեր)**	Հատուկ ֆոնդեր, որոնք թիրախավորում են ՄԱԿ-ի ԿԶՆ-ներին հասնելու գործում դրական ներդրում ունեցող ընկերություններին: Ընկերությունները կարող են իրենց ներդրումն ունենալ այս գործում՝ ստեղծելով ապրանքներ կամ առաջարկելով ծառայություններ, որոնք օգնում են հասնել 17 նպատակներից մեկին կամ մի քանիսին:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
51	**Կայուն զարգացում**	Արդի քաղաքակրթության զարգացման հայեցակարգ է՝ միտված ներկա և ապագա սերունդների կենսական կարիքների բավարարման և կարողությունների դրսևորման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը: Հայեցակարգի հիմքում սոցիալական, տնտեսական և էկոլոգիական բաղադրիչների միասնության և որոշումների կայացման գործընթացում դրանց ներդաշնակեցման գաղափարն է՝ որպես մարդկության գոյության և առաջընթացի շարունակականության գրավականի, մասնավորապես՝ 1. Էկոլոգիական բաղադրիչը ենթադրում է անցում բնության ռացիոնալ օգտագործման՝ ապահովելու համար մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանումը: 2. Սոցիալական բաղադրիչը շեշտը դնում է ներառականության, մեկնարկային հնարավորությունների հավասարության և եկամուտների արդարացի բաշխման վրա՝ ապահովելու համար հասարակության անդամների անհատական և կոլեկտիվ զարգացումը: 3. Տնտեսական բաղադրիչն իր հերթին ենթադրում է էկոլոգիական անվտանգության և սոցիալական արդարության սկզբունքներին համապատասխան տնտեսական գործունեության իրականացում՝ ապահովելու համար հասարակության անդամների բարեկեցիկ գոյությունը:
52	**Կայուն ընկերություններ**	Ընկերություններ, որոնք իրենց գործունեության շրջանակներում կարևորում են շրջակա միջավայրի, սոցիալական և պատշաճ կառավարման (ESG) գործոնները:
53	**Կայուն ներդրումներ/սոցիալապես պատասխանատու ներդրումներ**	Ներդրումային ռազմավարություն, որը հաշվի է առնում շրջակա միջավայրի, սոցիալական և կորպորատիվ կառավարման չափանիշները՝ ապահովելու համար երկարաժամկետ մրցունակ ֆինանսական եկամուտներ և դրական սոցիալական ազդեցություն:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
54	**Կայունության զեկույց**	Հաշվետվություն, որն իրազեկում է շահակիցներին ESG գործոնների վերաբերյալ կազմակերպության քաղաքականության, ծրագրերի, կատարողականի և շրջակա միջավայրի ու հասարակության վրա կազմակերպության ազդեցության մասին: Կայունության զեկույցը կոչում են նաև ESG հաշվետվություն, կորպորատիվ քաղաքացիության հաշվետվություն կամ ԿՍՊ հաշվետվություն: Սովորաբար դա ունի կամավոր բնույթ, սակայն հիմնավորվում են առանձին կազմակերպությունների համար դրանց պարտադիր լինելու, անկախ աուդիտի, ֆինանսական հաշվետվություններին ինտեգրելու միտումները:
55	**Կայուն ֆինանսների բացահայտման կանոնակարգ**	ԵՄ կայուն ֆինանսների բացահայտման կանոնակարգը (SFDR) ԵՄ կանոնների հավաքածու է, որի նպատակն է ֆինանսական միջոցների կայունության պրոֆիլը դարձնել առավել համեմատելի և հասկանալի վերջնական ներդրողների համար: Այն կենտրոնանալու է ներդրումային գործընթացի էկոլոգիական, սոցիալական և պատշաճ կառավարման (ESG) արդյունքների գնահատման նախապես սահմանված չափորոշիչների վրա: Ինչպես ենթադրում է անվանումը, մեծ ուշադրություն է դարձվելու տեղեկատվության բացահայտմանը, ներառյալ՝ նոր կանոններին համաձայն՝ ներդրումային ընկերության ցանկացած վնասակար ազդեցության բացահայտմանը:
56	**Կայուն ֆոնդային բորսաների նախաձեռնություն**	ՄԱԿ-ի գործընկերության ծրագիր: Այն բորսաների, ներդրողների, ընկերությունների, կարգավորող մարմինների, քաղաքականություն մշակողների և համապատասխան միջազգային կազմակերպությունների համագործակցության գլոբալ հարթակ է, որի գործունեությունն ուղղված է ESG հարցերում կատարողականի բարելավմանը, կայուն ներդրումների, ներառյալ՝ ՄԱԿ-ի ԿԶՆ ֆինանսավորման խրախուսմանը:
57	**Կանանց զորացման սկզբունքներ (ԿԶՍ)**	Սկզբունքների ամբողջություն, որն ուղեցույց է մասնավոր հատվածի կողմից խթանելու գենդերային հավասարությունը և կանանց հզորացումը աշխատավայրում, աշխատանքի շուկայում և համայնքում: Հիմնադրվելով ՄԱԿ-ի Համաշխարհային պայմանագրի և ՄԱԿ Կանայք կառույցի

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		կողմից՝ ԿՀՍ-ները ելնում են աշխատանքի և մարդու իրավունքների միջազգային ստանդարտներից և հիմնված են այն գիտակցության վրա, որ մասնավոր հատվածը ոչ միայն մասնակցում է, այլև պատասխանատվություն է կրում գենդերային հավասարության և կանանց հզորացման համար: Կանանց զորացման սկզբունքներն արտացոլում են նաև կառավարությունների և քաղաքացիական հասարակության շահերը և ծառայում են շահագրգիռ կողմերի փոխգործակցությանն աջակցելուն, քանզի գենդերային հավասարության հասնելու համար անհրաժեշտ է բոլոր դերակատարների մասնակցությունը բոլոր մակարդակներում: Կանանց զորացման սկզբունքները յոթն են. Սկզբունք 1. Ղեկավարությունը խրախուսում է գենդերային հավասարությունը: Սկզբունք 2. Հավասար հնարավորություններ, ներառականություն և խտրականության բացառում: Սկզբունք 3. Առողջություն, անվտանգություն և ազատություն բռնությունից: Սկզբունք 4. Կրթություն և վերապատրաստում: Սկզբունք 5. Ձեռնարկությունների ստեղծում, մատակարարման շղթա և մարքեթինգի գործընթացներ: Սկզբունք 6. Համայնքային նախաձեռնություններ և իրազեկվածության բարձրացում:
58	**Կանանց նկատմամբ խտրականություն**	Սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում, տղամարդկանց և կանանց, անկախ նրանց ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
59	**Կանաչ լվացում/գրինվոշինգ**	Կազմակերպության գործունեության կայունության մասին կեղծ և մոլորեցնող տպավորության ստեղծում սպառողների և ներդրողների շրջանում: Կանաչ լվացումը ոչ թե կայուն զարգացման վերաբերյալ գիտելիքների բացակայության արդյունք է, այլ մարքեթինգային և PR տեխնոլոգիա՝ միտված նեղ կորպորատիվ շահերի բավարարմանը: Այն քողարկում է արտաքին միջավայրի վրա կազմակերպության բացասական ազդեցությունը, բարձրացնում ներդրումային գրավչությունը, ընդլայնում վաճառքների ծավալները և ապահովում քաղաքական աջակցություն: Միաժամանակ, այն առաջ է բերում հեղինակության, հասարակության շրջանում վստահության կորստի լրջագույն ռիսկեր, որոնք գերազանցում են մինչ այդ ձեռք բերած բոլոր օգուտները: ԱՄՆ Առևտրի դաշնային հանձնաժողովը (FTC) սպառողների համար մշակել է իրական, կանաչ արտադրանքը կեղծից տարբերակելու ուղենիշներ. 1. Փաթեթավորումը և գովազդը պետք է պարզ և ընթեռնելի կերպով հիմնավորեն արտադրանքի կանաչ հատկությունները: 2. Մարքեթինգային հայտարարությունը պետք է հստակեցնի՝ կանաչ հատկությունները վերաբերում են արտադրանքին/փաթեթավորմանը, թե արտադրանքի/փաթեթավորման մի մասին: 3. Մարքեթինգային հայտարարությունը չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն գերագնահատի արտադրանքի կանաչ հատկությունները կամ օգուտները: 4. Մրցակցային առավելության մասին հայտարարությունը պետք է հիմնավորվի փաստերով:
60	**Կանաչ պարտատոմսեր**	Պարտատոմսեր, որոնց համար ստացված հասույթն օգտագործվում է բացառապես կլիմայի և շրջակա միջավայրի կայունության նպատակները խթանելու համար:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
61	**Կաշառակերություն**	Երևույթ, որն ընդգրկում է երեք տեսակի հանցագործություն՝ կաշառք ստանալը, կաշառք տալը և կաշառքի միջնորդությունը: Կաշառք ստանալ է համարվում պաշտոնատար անձի՝ անձամբ կամ միջնորդի միջոցով նյութական արժեքներ ընդունելը կամ գույքային շահ ձեռք բերելը որևէ անձից՝ նրա օգտին իր պաշտոնեական դիրքով պայմանավորված անհրաժեշտ գործողություններ կատարելու (կամ գործողություններից զերծ մնալու) պարտավորությամբ: Հանցագործությունը ծանրացնող հանգամանքներ են բազմիցս կաշառք ստանալը, շորթելը, անձի պատասխանատու դիրքը, կաշառակերության համար նախկին դատվածությունը:
62	**Կապակցված կողմ**	Կողմը կապակցված է, եթե նա կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկել մյուս կողմին կամ վերահսկողություն իրականացնել այլ կողմերի միջոցով կամ ենթակա լինել ընդհանուր վերահսկողության: Կապակցված կողմերը հակված են ազդել ընկերության ֆինանսական կամ գործառնական քաղաքականության վրա: Կապակցված կողմ կարող է լինել ընտանիքի մերձավոր անդամ, կազմակերպության բարձրագույն ղեկավար (և նրա ընտանիքի մերձավոր անդամներ) կամ այլ կազմակերպություններ, ինչպիսիք են դուստր ձեռնարկությունները, հոլդինգային ընկերությունը, համատեղ ձեռնարկությունները:
63	**Կապիտալ**	Արժեքների ամբողջություն, ներդրում գործարար մոդելում, որից կախված է կազմակերպության հաջողությունը: Այն ավելանում, նվազում կամ փոխակերպվում է ձեռնարկատիրական գործունեության և արտադրանքի միջոցով: Միջազգային ինտեգրացված հաշվետվականության հայեցակարգը (IIRC) սահմանում է կապիտալի հետևյալ տեսակները՝ ֆինանսական, արտադրական, մտավոր, մարդկային, սոցիալական փոխհարաբերություններ և բնական ռեսուրսներ:
64	**Կապիտալ կառուցողական**	Ֆինանսական հոսքեր, որոնք լավ կառավարվում են ինչպես ֆինանսավորման աղբյուրում, այնպես էլ նպատակակետում:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		Կառուցողական կապիտալն աջակցում է շուկաներին և օրենքի գերակայությանը, խթանում թափանցիկությունը և բարելավում է կառավարումը՝ կառավարությունների վրա դնելով մասնավոր հատվածի համար հավասար պայմաններ ապահովելու պատասխանատվությունը: Կառուցողական կապիտալն աջակցում է ներառական տնտեսության, շուկայական ինստիտուտների կայացմանը և լավ կառավարման զարգացմանը, այդ թվում՝ գործարար վարքագծի չափորոշիչների բարձրացմանը:
65	**Կապիտալ քայքայող**	Թե՛ պետական և թե՛ մասնավոր ֆինանսական հոսքեր, որոնց հատուկ չեն թափանցիկությունը, հաշվետվողականությունը և շուկայական կողմնորոշումը: Ներդրումների այս տեսակը խաթարում է վստահությունը շուկայական ինստիտուտների նկատմամբ, թուլացնում օրենքի գերակայությունը, խթանում ոչ թափանցիկ գործելաոճը: Քայքայող կապիտալը հիմնարար սպառնալիք է ժողովրդավարության և ներառական շուկաների համար: Դա խաթարում է կառուցողական կապիտալի ներգրավումը, ձևավորում թունավոր գործարար միջավայր, որը խեղդում է տեղական բիզնեսի նորարարությունը, նվազեցնում հավասարությունը և խոչընդոտում զարգացման հեռանկարները:
66	**Կառուցողական կապիտալի հայեցակարգ**	Հայեցակարգ, որը ներկայացնում է մասնավոր կապիտալի հոսքերին և օտարերկրյա ուղղակի ներդրումներին աջակցելու նորարարական մոտեցում՝ հիմնված համակարգային բարեվարքության վրա: Հայեցակարգը՝ որպես արդար, ներառական և կայուն տնտեսությունների հիմք, պաշտպանում է թափանցիկությունը, հաշվետվողականությունը և օրենքի գերակայությունը: Հայեցակարգի անկյունաքարերն են՝ • դրական խաղաղությունը, • օրենքի գերակայությունը, • հաշվետու ինստիտուտները,

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		• քաղաքական և տնտեսական ազատությունը, • սոցիալական և տնտեսական ներառականությունը, • արժեքների վրա հիմնված մասնավոր հատվածը:
67	**Կենսաբազմազանություն**	Երկրի վրա կյանքի բոլոր ձևերի հանրագումար՝ պարզ գենետիկական կառուցվածքներից, բույսերից և ծառերից մինչև կենդանիներ, ծովային արարածներ և մարդիկ: Միմյանցից տարբերվող այս կենսաբանական տարրերի միջև փոխազդեցության շնորհիվ մոլորակը միլիոնավոր տարիներ շարունակ պիտանի է եղել կյանքի համար: Համաձայն Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի՝ բոլոր աղբյուրներից առաջացող կենդանի օրգանիզմների փոփոխունությունը, ներառյալ՝ ցամաքային, ծովային և այլ ջրային էկոհամակարգերը և էկոլոգիական համալիրները: Հասկացությունն ընդգրկում է նաև մեկ տեսակի շրջանակներում և տարբեր տեսակների միջև առկա բազմազանությունը և էկոհամակարգերի բազմազանությունը:
68	**Կիբերանվտանգություն**	Համակարգչային անվտանգություն կամ տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգություն: Սա համակարգչային համակարգերի պաշտպանությունն է, դրանց ծրագրային ապահովման կամ էլեկտրոնային տվյալները գողությունից, ինչպես նաև մատուցած ծառայությունների խաթարումից կամ սխալից զերծ պահելու միջոցով:
69	**Կլիմայական փոփոխության մեղմում**	Մթնոլորտ ջերմոցային գազերի արտանետումների կրճատում կամ ջերմոցային գազերի կլանում մթնոլորտից:
70	**Կլիմայի փոփոխություն**	Երկրի մթնոլորտի տաքացման արդյունքում եղանակային պայմաններում նկատվող փոփոխություն, որը պայմանավորված է մարդու հարաճուն տնտեսական գործունեությամբ և կոչվում է մարդահարույց կամ տեխնածին կլիմայի փոփոխություն: Այդ փոփոխությունների հիմնական

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		պատճառը հանքային վառելանյութի օգտագործման հետևանքով մթնոլորտում ջերմոցային գազերի պարունակության աճն է, որը հանգեցնում է բնական ջերմոցային էֆեկտի ուժեղացման և մթնոլորտի ու Երկրի բնական ճառագայթային հաշվեկշռի խախտման: Կանխատեսումների համաձայն՝ այդ փոփոխությունները կհանգեցնեն կլիմայի համամոլորակային ու տարածաշրջանային զգալի փոփոխությունների և, որպես հետևանք, ջերմաստիճանի, տեղումների քանակի, հողի խոնավության ու ծովի մակարդակի փոփոխության՝ դրանցից բխող այլ անբարենպաստ հետևանքներով: Կլիմայի փոփոխությանը նպաստող կարևորագույն գործոններից են նաև զանգվածային անտառհատումները, որոնք նվազագույնի են հասցնում կամ վերացնում անտառների կլիմայակարգավորիչ և ջրապահպան հատկությունները:
71	**Կլիմայական ֆոնդեր**	Ֆոնդեր, որոնց ներդրումային պորտֆելները ձևավորվում են Փարիզյան համաձայնագրի նպատակներին համապատասխանող ընկերությունների բաժնետոմսերից կամ պարտատոմսերից: Նրանք նաև կարող են թիրախավորել այն կառավարությունների պարտատոմսերը, որոնք կրճատում են ջերմոցային գազերի արտանետումները՝ դրանով իսկ նվազեցնելով գլոբալ տաքացման մեջ իրենց ազդեցությունը:
72	**Կոլեկտիվ բանակցություններ**	Գործատուների և արհմիությունների ներկայացուցիչների միջև համատեղ աշխատանքային և զբաղվածության պայմանները որոշելու քննարկումներ և բանակցություններ: Կոլեկտիվ բանակցությունները ներառում են նաև բանակցությունների արդյունքում կնքված պայմանագրերի կատարում և կառավարում և այնպիսի հարցերի կարգավորում, որոնք ծագում են արհմիությունների ներկայացուցիչ աշխատողների աշխատանքային հարաբերություններում:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
73	**Կոնվենցիայի կողմերի համաժողով (COP)**	Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի ղեկավար մարմին, որն ամենամյա հանդիպումների շրջանակներում գնահատում է կլիմայի փոփոխության դեմ պայքարում առաջընթացը և որոշումներ կայացնում հետագա քայլերի վերաբերյալ: Կոնվենցիայի կողմերից (կոնվենցիան ստորագրած երկրներ) բացի, Համաժողովին մասնակցում են քաղաքացիական հասարակության, գործարար հատվածի, միջազգային կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Նպատակը գործընթացի թափանցիկության և հնչեցվող տեսակետների բազմազանության ապահովումն է: COP26-ը տեղի է ունեցել Շոտլանդիայում, COP27-ը՝ Եգիպտոսում, իսկ COP28-ն անցկացվելու է Արաբական Միացյալ Էմիրություններում: COP27-ի բացառիկ դերը պայմանավորվում է կլիմայի փոփոխության դեմ պայքարում Կոնվենցիայի կողմերի ոչ բավարար ջանքերով: Սրանով է բացատրվում Համաժողովի խորագրի ընտրությունը՝ «Միասին դեպի իրականացում»: COP27-ի օրակարգում են՝ 1. Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման միջոցառումների մասշտաբի ընդլայնումը, COP26-ի շրջանակներում համաձայնեցված բազմակողմ գործարքների ուղղությամբ առաջընթացի գնահատումը, 2. Կլիմայի փոփոխությանն ադապտացման անհրաժեշտության գիտակցումը և պատշաճ ֆինանսավորումը, Ադապտացման գլոբալ նպատակի (GGA) հստակեցումը, 3. Փարիզի համաձայնագրի և Կայուն զարգացման նպատակների կյանքի կոչման գործում զարգացող երկրներին կանոնավոր հիմունքներով ֆինանսական աջակցության տրամադրումը,

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		4. Կլիմայի փոփոխության հետևանքով զարգացող երկրների կրած վնասների և կորուստների փոխհատուցումը, 5. Ազգային մակարդակում սահմանված գործողությունների (NDGs) բարելավումը, միջպետական համագործակցության ընդլայնումը:
74	**Կոռուպցիա**	Անձնական կամ այլ շահադիտական նպատակով, տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահում: Կոռուպցիան որպես վստահված իշխանության չարաշահում ունի մի շարք դրսևորումներ և բազում «նրբերանգներ», որոնցից են կաշառակերությունը՝ կաշառք ստանալը, տալը, կաշառքի միջնորդությունը, կաշառքի շորթումը, հովանավորչությունը, պաշտոնական դիրքի կամ կապերի չարաշահումը, պաշտոնական լիազորությունները չարաշահելը կամ անցնելը, պաշտոնական կեղծիքը, պաշտոնական դիրքի օգտագործմամբ պետական սեփականության յուրացումն ու վատնումը, ինչպես նաև պաշտոնեական այլ չարաշահումները: «Կոռուպցիա» եզրույթն առաջացել է լատիներեն «corruptus» և «corrumpere» բառերից, որոնք նշանակում են փչացում, այլասերում, վարակում, ապականում, աղճատում, աղավաղում, կաշառում և այլն: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության սահմանման համաձայն՝ կոռուպցիան ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է՝ անձնական օգուտ ստանալու նպատակով:
75	**Կորպորատիվ կառավարում**	Համակարգ, որը ներառում է ընկերությունների կառավարման և վերահսկման գործընթացները և կառուցվածքները՝ ռազմավարական մոտեցում ցուցաբերելով ղեկավարների, խորհրդի

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		անդամների, սեփականատերերի/բաժնետերերի և շահակիցների փոխհարաբերությունների նկատմամբ: Կորպորատիվ կառավարումը որոշում է այն կառուցվածքները, որոնք թույլ են տալիս սահմանել ընկերության նպատակները, այդ նպատակներին հասնելու և գործունեության արդյունքները գնահատելու միջոցները:
76	**Կորպորատիվ քաղաքացիություն**	Հայեցակարգ, որը հիմնվում է այն հիմնադրույթի վրա, որ ընկերությունը՝ որպես կորպորատիվ քաղաքացի, ցանկացած քաղաքացու նման պարտավոր է ծառայել հանրությանը և նպաստել հանրային բարիքի ձևավորմանը: Լինել լավ կորպորատիվ քաղաքացի նշանակում է արժանապատիվ և հարգալից վերաբերմունք դրսևորել սեփական շահակիցների նկատմամբ, իրազեկ լինել դրանց վրա ընկերության գործունեության ազդեցության վերաբերյալ և համագործակցել նրանց հետ: Լավ կորպորատիվ քաղաքացին չի սահմանափակվում միայն աշխատատեղերի ձևավորմամբ և իրավական համապատասխանությամբ: Կորպորատիվ քաղաքացիության հայեցակարգը կոչված է բիզնեսի և հասարակության հարաբերությունները հակազդեցության և (կամ) ֆինանսական աջակցության ավանդական հարթությունից տեղափոխել դեպի համագործակցության հարթություն:
77	**Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն (ԿՍՊ)**	Ընկերության քաղաքականություն կամ գործելաոճ, որը նպաստում է շրջակա միջավայրի անվտանգությանը, տնտեսության կայունությանը և հասարակության բարեկեցությանը: Այն հաշվի է առնում ընկերության հաճախորդների, մատակարարների, բաժնետերերի և աշխատակիցների, տեղական համայնքի պահանջմունքները՝ առանց ապագա սերունդների պահանջմունքների բավարարմանը վնասելու:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		ԿՍՊ-ը կառավարման եղանակ է, որի առանցքն ընկերության կորպորատիվ արժեքներն ու մշակույթն են, ինչպես նաև կորպորատիվ որոշումների հավասարակշռումը շահակիցների շահերով և այդ հիմքով՝ դրանց որակի բարձրացումը: ԿՍՊ-ը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն պահանջները: ԿՍՊ-ը սկսվում է այնտեղ, որտեղ «վերջանում է օրենքը»: ԿՍՊ-ը հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման և համաձայնեցման միջոց է: ԿՍՊ-ն ընկերությունների ռազմավարական կառավարման տարր է, կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործման և ռիսկերի կառավարման գործիք:
78	**Կրիտիկական կենսամիջավայր**	Կենսաբազմազանության բարձր արժեք ունեցող տարածք, ներառյալ՝ 1) վտանգված և (կամ) անհետացման սպառնալիքի ներքո գտնվող տեսակների համար էական նշանակություն ունեցող կենսամիջավայր. 2) էնդեմիկ և (կամ) որոշակի տարածությամբ սահմանափակված տեսակների համար էական նշանակություն ունեցող կենսամիջավայր. 3) միգրացիոն տեսակների և (կամ) համախմբված տեսակների գլոբալ առումով նշանակալի կենտրոնացումների կենսամիջավայր. 4) խիստ վտանգված և (կամ) եզակի էկոհամակարգեր. 5) առանցքային էվոլյուցիոն գործընթացների հետ կապված տարածք:
79	**Հակակոռուպցիոն համապատասխանության ծրագիր**	Կազմակերպության՝ կոռուպցիոն ռիսկերը կառավարելու և կանխարգելելու համակարգված ջանքեր, որի բաղադրիչներն են՝ բարձրագույն ղեկավարության հանձնառությունը, ռիսկերի գնահատումը, վարքականոնները, կորպորատիվ քաղաքականությունները և ընթացակարգերը, համապատասխանության նկատմամբ հսկողությունը, անձնակազմի ու գործընկերների ուսուցումը, ազդարարման կառուցակարգերը և հետաքննումը, խրախուսման և պատասխանատվության միջոցները, մոնիթորինգն ու բարելավումները:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
80	**Համապատասխանություն**	Նորմատիվ իրավական ակտերի, կարգավորումների, հանձնարարականների, ներքին քաղաքականությունների, ընթացակարգերի և պայմանագրերի պահանջներին համապատասխան գործելու կազմակերպության պարտականություն:
81	**Համաշխարհային հաշվետվականության նախաձեռնություն**	Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող միջազգային կազմակերպություն, որը 1999թ.-ից զբաղվում է կայուն զարգացման հաշվետվականության հարցերով: Հաշվետվականության շրջանակի վերջնական տարբերակը՝ ՀՀՆ չափանիշները, հրապարակվել է 2016թ.-ին: Այն առավել լայն տարածում ունեցող և ընդգրկուն կամավոր հաշվետվականության շրջանակն է:
82	**Հանդուրժողականություն**	Համբերություն, համբերատարություն, այլ աշխարհայացքի հետ հարմարվելու կարողություն: Հանդուրժողականություն նշանակում է ուրիշին իր սեփական աշխարհայացքով ապրելու իրավունք վերապահել, տարակարծությունը, այլ անձի ազատությունները հարգելով հանդերձ կարծիք արտահայտել, փորձել համոզել վերանայել տեսակետը: Հանդուրժողականությունը չի նշանակում ընդօրինակել խորթ աշխարհայացքը կամ կենսակերպը:
83	**«Հանցավոր» բաժնետոմսեր**	Ընկերությունների բաժնետոմսեր, որոնք ներգրավված են էթիկական տեսանկյունից վիճահարույց գործունեության մեջ, մասնավորապես՝ զբաղվում են ալկոհոլի, ծխախոտի կամ զենքի արտադրությամբ:
84	**Հաշվետվողականություն**	Լավ կառավարման առանցքային սկզբունք, որը հիմքեր է ձևավորում կազմակերպության գործունեության օրինականության համար, ինչպես նաև հանգեցնում է կազմակերպության կատարողականի բարելավմանը: Կազմակերպությունը պետք է ապահովի իր հաշվետվությունների և էական տեղեկությունների բացահայտումը, որը ներառում է՝

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		1. կազմակերպության նպատակը, արժեքները, արժեքի ձևավորման մոդելը, կազմակերպության ռազմավարությունը և կառավարման քաղաքականությունները, 2. կառավարման մարմնի մասին տեղեկատվությունը, 3. կազմակերպության մասին տեղեկատվությունը, ներառյալ՝ • կազմակերպության նպատակի կատարողականը, • կազմակերպության կատարողականի ստացման եղանակն ու դրա ողջամտությունը, • այն ազդեցությունը, որը կազմակերպությունն ունեցել է և ակնկալում է ունենալ իր կողմից օգտագործվող ռեսուրսների և շրջակա, սոցիալական և տնտեսական միջավայրի վրա, • կառավարման մարմնի որոշումների վրա ազդող շահակիցները, • կազմակերպական մշակույթը, ներառյալ՝ կազմակերպական վարքագիծը և դրա վերաբերյալ ընկալումները, 4. համապատասխանության պարտավորությունների կատարողականը, 5. հավաստիացման գործընթացների նկարագրությունը, 6. գաղտնիության սահմաններում կազմակերպության թափանցիկությունը, 7. կազմակերպության գործողությունների, անգործության, բացթողումների, ռիսկերի և կախվածությունների, ներառյալ՝ կառավարման մարմնի գործողությունների բացատրությունն ու հիմնավորումը:
85	**Հարկադիր աշխատանք**	Ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը կատարվել է ոչ կամավոր հիմունքներով, այլ ուժի կամ պատժի սպառնալիքի ներքո:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
86	**Մատակարարման շղթա**	Ապրանքը կամ ծառայությունն արտադրողից սպառողին հասցնելու գործընթացում ներգրավված կազմակերպությունների, մարդկանց, գործառնությունների, տեղեկատվության և ռեսուրսների ամբողջություն: Մատակարարման շղթայի գործառույթների մեջ է մտնում բնական ռեսուրսների, հումքի և սպառողին մատակարավող վերջնական ապրանքի բաղադրիչ մասերի տեղափոխումը: Ավելի բարդ և ճյուղավորված մատակարարման շղթաներում օգտագործված ապրանքները կարող են վերամշակվել և նորից մտնել արտադրական գործընթաց: Մատակարարման շղթաները կապվում են արժեշղթաների հետ:
87	**Մարդկային կապիտալ**	Գիտելիքների, ունակությունների համադրություն, որն օգտագործվում է անհատների և հասարակության՝ որպես մեկ ամբողջության բազմազան կարիքների բավարարման համար: Ի սկզբանե, հասկացությունը սահմանվում էր որպես ներդրումների ամբողջություն մարդկանց զարգացման մեջ, ինչը բարձրացնում էր աշխատանքի արտադրողականությունը, կրթական և մասնագիտական հմտությունները: Հետագայում հայեցակարգը նշանակալիորեն ընդլայնվել է: Ըստ Համաշխարհային բանկի՝ մարդկային կապիտալը ներառում է սպառողական ծախսերի արժեքը՝ ընտանիքների կողմից սննդի, հագուստի, կացարանի, կրթության, առողջապահության, մշակույթի վրա կատարած ծախսերը, ինչպես նաև այս նպատակի համար կատարված պետական ծախսերը: Մարդկային կապիտալն ինովացիոն և գիտելիքահեն տնտեսության ձևավորման և զարգացման հիմնական գործոն է:
88	**Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր**	ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ. դեկտեմբերի 10-ին ընդունված հիմնարար փաստաթուղթ, որն ունի խորհրդատվական կարգավիճակ, բայց դրա հիմքում ընկած են մասնակիցների համար պարտադիր երկու պայմանագիր՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային համաձայնագիրը և Տնտեսական, սոցիալական և մշակութային

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		իրավունքների մասին միջազգային դաշնագիրը: Հռչակագրի առանձին դրույթներ, ինչպես օրինակ խոշտանգումների և ստրկության արգելքը, որպես իմպերատիվ նորմա՝ պարտադիր են: Հռչակագիրը համեմատվում է հունական տաճարի սյունազարդ նախասրահի հետ, որն ունի հիմք, աստիճաններ, չորս սյուներ և վերնաճակատ: 1-ին և 2-րդ հոդվածները հիմնարար բլոկերն են՝ իրենց արժանապատվության, ազատության, հավասարության և եղբայրության մասին սկզբունքներով: Նախաբանի յոթ կետերը, որոնցում շարադրվում են Հռչակագրի պատճառները, իրենցից ներկայացնում են աստիճանները: Հռչակագրի հիմնական կառուցվածքը ձևավորում է չորս սյուները: Առաջին սյունը (3-11 հոդվածները) կազմում են անձի իրավունքները, ինչպիսիք են կյանքի իրավունքը և ստրկության արգելումը: Երկրորդ սյունը (12-17 հոդվածները) կազմում են անհատի իրավունքները քաղաքական ու քաղաքացիական հասարակության մեջ: Երրորդ սյունը (18-21 հոդվածները) վերաբերում է հոգևոր, հասարակական և քաղաքական ազատություններին, ինչպիսիք են կրոնի ազատությունը և միություններ կազմելու իրավունքը: Չորրորդ սյունը (22-27 հոդվածները) սահմանում է սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքները: Այս մոդելում Հռչակագրի վերջին երեք սյուներն ապահովում են վերնաճակատը, որը կապակցում է ամբողջ կառուցվածքը: Այս հոդվածները վերաբերում են անհատի պարտականություններին հասարակության նկատմամբ և ՄԱԿ-ի նպատակներին հակասող իրավունքների կիրառման արգելմանը: Ըստ Համընդհանուր հռչակագրի՝ մարդկության ընտանիքի բոլոր անդամների անկապտելի արժանապատվության ճանաչումը ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքն է: Այն ճանաչում է յուրաքանչյուր մարդ արարածի անկապտելի իրավունքները, ներառյալ՝ կյանքի, ազատության և սեփական անձի անձեռնմխելիության իրավունքը, հետապնդումից այլ երկրներում ապաստան փնտրելու և այդ ապաստանից օգտվելու իրավունքը, համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունքը, կրթության իրավունքը, մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը, խոշտանգումից և

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը: Այս անկապտելի իրավունքներից պետք է օգտվեն աշխարհի բոլոր տղամարդիկ, կանայք, երեխաները, ինչպես նաև հասարակության բոլոր խմբերը:
89	**Միավորված ազգերի կազմակերպության Համաշխարհային պայմանագիր**	Կորպորատիվ կայունության գլոբալ նախաձեռնություն, որը կոչ է անում ընկերություններին, ներդրողներին և այլ մասնակիցներին համապատասխանեցնել իրենց ռազմավարությունները և գործողությունները մարդու իրավունքների, աշխատանքային, բնապահպանական և հակակոռուպցիոն համընդհանուր սկզբունքներին: Համաշխարհային պայմանագիրը ՄԱԿ-ի ոչ պարտադիր պայմանագրերից է, որն ամբողջ աշխարհում խրախուսում է ձեռնարկություններին որդեգրել կայուն և սոցիալապես պատասխանատու քաղաքականություն ու հաղորդակցվել դրանց իրականացման շուրջ:
90	**Շահակիցներ**	Անձինք կամ անձանց խմբեր, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում են կազմակերպության հետ, ինչպես նաև հետաքրքրված են կազմակերպության գործունեությամբ և (կամ) կարող են ազդել կազմակերպության կատարողականի վրա՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական իմաստով: Անձինք են, որոնց վրա կազմակերպության գործունեությունն ունի էական ազդեցություն, և որոնց գործողությունները կարող են էականորեն ազդել կազմակերպության կողմից իր ռազմավարական նպատակներին հասնելու կարողության վրա (հաճախորդներ, աշխատակիցներ, գործընկերներ, պետական մարմիններ, տեղական համայնք և այլն):

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
91	**Շահակիցների կապիտալիզմ**	Կապիտալիզմի տեսակ է, որի դեպքում ընկերությունները ձգտում են ձևավորել երկարաժամկետ արժեք՝ հաշվի առնելով իրենց շահակիցների և ընդհանուր առմամբ հասարակության կարիքները: Շահակիցների կապիտալիզմը միտված է բաժնետերերի համար շահույթի ձևավորմանը՝ հասարակության (հաճախորդներ, աշխատակիցներ, մատակարարներ, տեղական համայնք, շրջակա միջավայր) համար արժեք ստեղծելու միջոցով: Այն ընկերությունների նպատակասլաց կառավարումն է և նպաստում է բիզնեսի կողմից հանրային նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը, բարձր էթիկական չափորոշիչների շրջանակներում գործելուն, շահակիցների սպասումների արդարացմանն ու վստահության ձևավորմանը, ինչպես նաև կայուն զարգացման համար նախապայմանների ապահովմանը:
92	**Շահակիցների ներգրավվածություն**	Տարբեր շահակիցների հետ կառուցողական և արդյունավետ հարաբերությունների հաստատում և պահպանում, որը հնարավորություն է տալիս լսել, ըմբռնել, որոշումների կայացման ժամանակ հաշվի առնել տարբեր շահակիցների սպասումները, շահերը և մտահոգությունները:
93	**Շահերի բախում**	Իրավիճակ, երբ անձի հավատարմությունը, շահերը և պարտականությունները մրցակցում են և միմյանց հետ մտնում հակասության մեջ՝ ինչպես իրավական, այնպես էլ էթիկական առումով: Դա կարող է բացասաբար ազդել անձի անկողմնակալության վրա՝ նրա անձնական, մասնագիտական կամ հանրային շահերի հնարավոր հակասությունների պատճառով: Դա կարող է լինել իրավիճակ, երբ պարտականությունները երկրորդ կողմի նկատմամբ սահմանափակում են անձի կարողությունները կատարել երրորդ կողմի նկատմամբ ունեցած իր պարտականությունները պատշաճ շրջահայացությամբ և անաչառությամբ:
94	**Շրջակա միջավայրի արդարություն**	Բոլոր մարդկանց նկատմամբ արդարացի վերաբերմունք և նրանց իմաստալից ներգրավումը՝ անկախ ռասայից, գույնից, ազգային ծագումից կամ եկամտից՝ զարգացման, կենսագործման և

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		բնապահպանաան օրենքների, կարգավորումների և քաղաքականությունների գործադրման հետ հարաբերությամբ:
95	**Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման համակարգ**	Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի նկատմամբ ֆինանսական ինստիտուտների խոցելիության բացահայտման և կառավարման քաղաքականությունների, ընթացակարգերի, գործիքների և ներքին կարողությունների համախումբ, որը նախաձեռնվում և խրախուսվում է կազմակերպության ղեկավարության կողմից: Այն ներառում է կազմակերպության աշխատակիցներին, տեղական համայնքներին և այլ շահակիցների: Համակարգը գործում է «Պլանավորել, կատարել, ստուգել և գործել» մոտեցման հիման վրա: Համակարգը նպաստում է ֆինանսական, սոցիալական և էկոլոգիական արդյունքների բարելավմանը:
96	**Ոչ ֆինանսական հաշվետվականության ԵՄ Հրահանգ**	Եվրոպական հանձնաժողովի պահանջ՝ ուղղված խոշոր ընկերություններին իրենց տարեկան հաշվետվություններում բացահայտելու ոչ ֆինանսական էական տեղեկատվություն, այդ թվում՝ կոռուպցիայի, մարդու իրավունքների պաշտպանության, աշխատանքային պայմանների, սոցիալական այլ հարցերի և շրջակա միջավայրի պաշտպանության հետ կապված խնդիրների վերաբերյալ:
97	**Պատասխանատու կառավարում**	Լավ կառավարման վերջնարդյունք, երբ կազմակերպությունն իր ռեսուրսներն օգտագործում է պատասխանատու կերպով, արդյունավետորեն հավասարակշռում է իր դրական և բացասական ազդեցությունները, հաշվի է առնում գլոբալ համատեքստը, ապահովում է իր ներդրումը կայուն զարգացման մեջ, վստահություն է առաջացնում ինչպես համայնքներում, որտեղ գործում է, այնպես էլ դրանցից դուրս:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
98	**Պատասխանատու ներդրումների սկզբունքներ**	Պատասխանատու ներդրումների սկզբունքները պատասխանատու ներդրումների կամավոր սկզբունքների շարք են, որ մշակվել և ընդունվել են միջազգային ներդրողների կողմից՝ երկարաժամկետ ներդրումների ռիսկերը նվազագույնի հասցնելու և ներդրումային ռազմավարությունների մեջ սոցիալական, բնապահպանական և կառավարման գործոնները ներառելու համար: Սկզբունքները մշակվել են ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի (UNEP) ֆինանսական աջակցությամբ խոշոր ինստիտուցիոնալ ներդրողների կողմից, որոնք ձևավորել են ընկերությունների ամենօրյա գործունեության մեջ կայուն զարգացման նպատակներն ինտեգրելու առաքելություն ունեցող Պատասխանատու ներդրումների ասոցիացիան: Սկզբունքները վեցն են՝ Սկզբունք 1. Մենք կներառենք ESG գործոնները ներդրումների վերլուծության և որոշումների կայացման գործընթացներում: Սկզբունք 2. Մենք կգործենք որպես ակտիվ սեփականատեր և կներառենք ESG գործոնները սեփականության մեր քաղաքականության և պրակտիկայի մեջ: Սկզբունք 3. Մենք կպահանջենք ESG գործոնների վերաբերյալ համապատասխան բացահայտումներ այն կազմակերպություններից, որտեղ ներդրումներ ենք կատարում: Սկզբունք 4. Մենք կնպաստենք ներդրումների ոլորտում Սկզբունքների ընդունմանը և իրականացմանը: Սկզբունք 5. Մենք կաշխատենք միասին բարձրացնել Սկզբունքներին հետևելու մեր արդյունավետությունը: Սկզբունք 6. Մեզանից յուրաքանչյուրը կզեկուցի իր գործունեության և Սկզբունքներին հետևելու առաջընթացի մասին:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
99	Ջերմոցային էֆեկտ	էֆեկտ, որի դեպքում Արեգակի ջերմությունը տիեզերք արտացոլվելու փոխարեն կլանվում է Երկրի մթնոլորտում՝ առաջացնելով մոլորակի տաքացում:
100	Ռազմավարություն	Արժեքի ձևավորման մոդելի շրջանակներում կազմակերպության նպատակին հասնելու միջոց: Արդյունավետ ռազմավարությունը հիմք է հանդիսանում որոշումների կայացման համար և հնարավորություն տալիս համաձայնեցնել կազմակերպության գործունեության տարբեր բաղադրիչները:
101	Ռիսկ	Անորոշ ապագա իրադարձության հավանականություն, որը կարող է ազդել ընկերության նպատակներին հասնելու կարողության վրա: Ռիսկը չափվում է ազդեցությամբ և տեղի ունենալու հավանականությամբ:
102	Ռիսկի կառավարում	Կազմակերպական նպատակներին հասնելու համար կազմակերպության ռիսկերին հակվածությունը որոշելու, ռիսկերը բացահայտելու, վերլուծելու, գնահատելու և հսկելու գործընթաց:
103	Ռիսկի ախորժակ	Ռիսկերի ընդհանուր մակարդակ, որը կազմակերպությունը պատրաստ է ստանձնել իր նպատակներին հասնելու համար: Ռիսկի ախորժակն արտացոլում է կազմակերպության վերաբերմունքը ռիսկերի նկատմամբ: Ռիսկի ախորժակը տարբերվում է կազմակերպությունից կազմակերպություն՝ պայմանավորված գործունեության ոլորտով, կորպորատիվ մշակույթով, ռեսուրսային ներուժով, նպատակների բնույթով և մրցակցային միջավայրով: Ռիսկի ախորժակը կարծրացած չէ. այն փոփոխվում է կազմակերպության արտաքին և ներքին գործոնների փոփոխությանը համապատասխան:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
104	**Ռիսկի հանդուրժողականություն**	Ռիսկերի մակարդակ, որը կազմակերպությունը պատրաստ է ստանձնել կոնկրետ ոլորտում: Ռիսկի հանդուրժողականությունն արտահայտում է կոնկրետ ոլորտում ռիսկերի առավելագույն և նվազագույն թույլատրելի շեմերը: «Ռիսկի ախորժակը» և «ռիսկի հանդուրժողականությունը» տարբեր, սակայն փոխկապված եզրույթներ են, մասնավորապես՝ 1. Ռիսկի հանդուրժողականությունը որոշվում է ռիսկի ախորժակի հիման վրա: 2. Ռիսկի ախորժակը կրում է ռազմավարական, իսկ ռիսկի հանդուրժողականությունը՝ մարտավարական բնույթ: 3. Ռիսկի ախորժակը համակարգային, մինչդեռ ռիսկի հանդուրժողականությունը նեղ և ոլորտային չափում է: 4. Ռիսկի ախորժակը սահմանվում է բարձրաստիճան, իսկ ռիսկի հանդուրժողականությունը՝ միջին օղակի ղեկավարության կողմից:
105	**Ռեսուրսների կայունություն**	Ռեսուրսների երկարաժամկետ հասանելիություն, որը կամ վերականգնվող է (այն կարող է բնական կերպով համալրվել) կամ չվերականգնվող (ի վերջո, այն կսպառվի): Սա ներդրողների համար կարևոր ցուցանիշ է, որը թույլ է տալիս հասկանալ, թե որքան արագ են մարդիկ օգտագործում երկրի սպառվող ռեսուրսները, որքանը կարող է փոխարինվել կամ վերամշակվել, ինչպես նաև որքան ժամանակ է մնացել այլ նյութերի սպառման համար:
106	**Սոցիալական հավասարություն**	Սոցիալական հասարակարգի հասկացություն, ըստ որի՝ որոշակի հասարակության մեջ գտնվող բոլոր մարդիկ ունեն հավասար իրավունքներ, ազատություններ և կարգավիճակ՝ հնարավորինս ներառելով քաղաքացիական, սեփականության իրավունքները, խոսքի ազատությունը, և որոշակի սոցիալական ապրանքների ու ծառայությունների հավասար հասանելիություն: Սոցիալական հավասարությունը պահանջում է անձի ինքնության անկապտելիությամբ պայմանավորված

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		խտրականության բացակայություն: Մասնավորապես, հավասար արդարությունը պետք է կիրառվի բոլոր մարդկանց հանդեպ՝ անկախ սեռից, էթնիկական պատկանելությունից, տարիքից, ծագումից, կաստայից կամ դասից, եկամտից կամ ունեցվածքի չափից, լեզվից, դավանած կրոնից, համոզմունքներից, հնչեցրած կարծիքներից, առողջությունից կամ ունեցած հաշմանդամության աստիճանից:
107	**Սոցիալական ձեռնարկատիրություն**	Գործարարության մեջ ալտրուիստական կանոնների կիրառում՝ կենտրոնանալով նորարարական լուծումներով հանրային օգուտ ձևավորելու վրա: Դրա միջոցով փորձ է կատարվում գտնել սոցիալական արժեք ձևավորող նոր մոտեցումներ և լուծումներ: Սոցիալական ձեռնարկատիրությունը հակված է՝ • սոցիալական, այլ ոչ թե անհատական արժեքների ձևավորման և խրախուսման առաքելության, • հանրային զարգացման նոր հնարավորությունների բացահայտման և իրականացման, • համարձակ ու առաջադիմական գործողությունների, • թիրախային սոցիալական խմբերի և սեփական կատարողականի նկատմամբ ունեցած պատասխանատվության բարձր զգացման: Դասական ձեռնարկատիրության և սոցիալական ձեռնարկատիրության տարբերությունը դրանց նպատակադրման մեջ է: Եթե դասական ձեռնարկատիրությունը ձգտում է շահույթների աճին, ապա սոցիալական ձեռնարկատիրությունը միտված է սոցիալական ոչ արդար պայմանները փոխելուն, սոցիալական փոփոխությունները խթանող արտադրանքի կամ ծառայությունների ստեղծմանը:
108	**Սոցիալական ներառականություն**	Հասարակության մեջ անհատների և խմբերի մասնակցության պայմանների բարելավման գործընթաց է՝ բարելավելով նրանց կարողությունները, հնարավորությունները:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		Սոցիալական ներառականությունը կարևոր է մարդու արժանապատվության, անվտանգության և ավելի լավ կյանք վարելու հնարավորության համար: Սոցիալական ներառականությունը խթանելու համար անհրաժեշտ է՝ • օգնել սոցիալապես մեկուսացած անհատներին և համայնքներին հաղթահարել անհավասարությունները, որոնց նրանք բախվում են: • Խթանել հավասար հնարավորությունները և վերացնել խտրականությունը: Սոցիալական ներառման խթանումն իր հիմքում նշանակում է ստեղծել ներառական հասարակություններ, որոնք հավասար հնարավորություններ են առաջարկում անհատներին՝ անկախ նրանց հանգամանքներից:
109	**Սոցիալապես պատասխանատու ներդրում**	Ներդրումային ռազմավարություն, որը ձգտում է հավասարակշռել և՛ ֆինանսական եկամուտները, և՛ սոցիալական բարիքները:
110	**Վարքականոններ/Էթիկայի կանոններ**	Գործարար վարքագծի ուղեցույց, որն օգնում է կազմակերպություններին վարել ազնիվ ու բարեվարք գործունեություն: Էթիկայի կանոններն արտացոլում են կազմակերպության առաքելությունն ու արժեքները: Էթիկական առումով զգայուն իրավիճակներում դրանք ուղղորդում են աշխատակիցներին դեպի թույլատրելի և ակնկալվող վարքագիծը՝ պաշտպանելով նրանց հնարավոր սխալներից ու ոչ իրավաչափ գործողություններից, որոնք կարող են վտանգել կազմակերպության կորպորատիվ հեղինակությունն ու դառնալ ֆինանսական կորուստների աղբյուր:
111	**Վերականգնվող կամ կանաչ էներգիա**	Այնպիսի աղբյուրներից ստացվող էներգիա, որոնք մարդկային մասշտաբներով անսպառ են, օրինակ՝ արևային էներգիա, հիդրոէներգիա, քամուց, երկրաջերմային որոշ տեսակներից և կենսազանգվածից ստացվող էներգիա:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		Աստղագետների հաշվարկներով Արեգակի կյանքը դեռ կարող է շարունակվել ևս մոտ 5 միլիարդ տարի, այնպես որ մարդկային չափանիշներով արևից ստացվող վերականգնվող էներգիան գրեթե անսպառ է: Վերականգնվող էներգիային հակադրվում են օգտակար հանածոների տեսքով էներգակիրները, որոնցից են քարածուխը, նավթը, բնական գազը կամ տորֆը: Լայն առումով, նրանք ևս վերականգնվող են, բայց ոչ մարդկային տեսանկյունից. նրանց վերականգնման համար անհրաժեշտ են միլիոնավոր տարիներ, իսկ դրանց սպառումը շատ ավելի արագ է ընթանում:
112	**Վերականգնվող ռեսուրսներ**	Բնական ռեսուրսներ, որոնք շահագործումից հետո կարող են վերադառնալ իրենց նախկին պաշարների մակարդակին՝ աճի կամ համալրման բնական գործընթացներով: Պայմանականորեն վերականգնվող են այն ռեսուրսները, որոնց շահագործումն ի վերջո հասնում է մի մակարդակի, որից այն կողմ վերականգնումը կդառնա անհնար, օրինակ՝ արևադարձային անտառների հատումը:
113	**Վերահսկողություն**	Կազմակերպության նպատակներին հասնելու և ռազմավարական արդյունքները նվաճելու միջոց, որը երաշխավորում է, որ պատվիրակված պարտականությունները կատարվում են այնպես, ինչպես պահանջվում է, և որոշումները կայացվում են պատվիրակված իրավասությունների շրջանակներում: Արդյունավետ վերահսկողության համար անհրաժեշտ է՝ • կազմակերպության կառավարման բոլոր էական կողմերի վերաբերյալ պահանջի այժմէական և ճշգրիտ հաշվետվություններ նրանցից, ում պատվիրակվել են իրավասություններ, • ներքին հսկողության համակարգ, ներառյալ՝ ռիսկերի կառավարում, համապատասխանություն և ֆինանսական վերահսկողություն,

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		• սխալներն ուղղելու գործողություններ, • հավաստիացումներ հաշվետվությունների ճշգրտության և ներքին հսկողության համակարգի արդյունավետության մասին:
114	**Վտանգավոր թափոններ**	Նյութեր, որոնք ունեն հետևյալ չորս բնութագրերից առնվազն մեկը՝ բռնկվողություն, կոռոզիա, ռեակտիվություն կամ թունավորություն, կամ հայտնվում են հատուկ ցուցակներում:
115	**Տնօրենների խորհուրդ (Խորհուրդ)**	Կազմակերպության կառավարման մարմին, որ պատասխանատու է կազմակերպության երկարաժամկետ հաջողության համար, հիմնական նպատակն է ապահովել կազմակերպության բարգավաճումը՝ դրա գործունեության հավաքական ուղղորդման միջոցով՝ հաշվի առնելով բաժնետերերի և հարգելով շահառուների շահերը:
116	**Տնօրենների խորհրդի գործադիր անդամ**	Խորհրդի անդամ, որը միաժամանակ տվյալ կազմակերպության կամ վերջինիս կողմից հսկվող կամ դրան հսկող կազմակերպության գործադիր պաշտոն զբաղեցնող անձ է:
117	**Տնօրենների խորհրդի ոչ գործադիր անդամ**	Խորհրդի անդամ, որը կազմակերպությունում չունի գործադիր ղեկավարման պարտականություններ:
118	**Տնօրենների խորհրդի ոչ գործադիր անկախ անդամ**	Խորհրդի անդամ, որը 1) վերջին հինգ տարում չի աշխատել ընկերության կամ նրա հետ փոխկապված անձանց մոտ, 2) փոխկապված չէ անձի հետ, որն ընկերության կամ նրա հետ փոխկապակցված կողմերի խորհրդատուն է, 3) փոխկապված չէ ընկերության կամ նրա փոխկապակցված անձանց նշանակալի հաճախորդի կամ մատակարարի հետ, 4) ընկերության, դրա փոխկապակցված կողմերի կամ դրա բարձրագույն ղեկավարության հետ չունի ծառայությունների մատուցման պայմանագրեր, 5) փոխկապակցված չէ ոչ առևտրային կազմակերպության հետ, որը նշանակալի ֆինանսավորում է ստանում ընկերությունից կամ դրա հետ փոխկապված կողմերից, 6) չի աշխատում որպես ղեկավար ընկերությունում, որտեղ

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		ընկերության ղեկավարներից որևէ մեկը տնօրենների խորհրդի անդամ է, 7) ընկերության բարձրագույն ղեկավարության ընտանիքի անդամ չէ, 8) չի հանդիսանում և վերջին հինգ տարիների ընթացքում չի եղել փոխկապակցված կամ չի վարձվել ընկերության կամ դրա փոխկապակցված կողմի ներկայիս կամ նախկին աուդիտորի կողմից, 9) ընկերությունը վերահսկող անձ չէ (կամ անհատների և (կամ) կազմակերպությունների խմբի անդամ, որոնք համատեղ վերահսկում են ընկերությանը):
119	**Տնտեսություն կանաչ**	Տնտեսական մոդել, որը ենթադրում է երկրի ռեսուրսների նկատմամբ մարդու պատասխանատու վերաբերմունք: Այն ուղղված է բարեկեցության աճի և բնական հարստությունների պահպանման միջև ողջամիտ փոխզիջման որոնմանը:
120	**Տնտեսություն ներառական**	Տնտեսական մոդել, որը բարեկեցիկ կյանքի հնարավորություններ է ստեղծում հնարավորինս շատ մարդկանց համար: Ներառական տնտեսության հիմնական հատկանիշներն են. • մասնակցայնություն. մարդիկ ազատորեն մասնակցում են տնտեսական կյանքին՝ թե՛ որպես աշխատող, թե՛ որպես սպառող և թե՛ որպես գործարար: Տնտեսական համակարգը թույլ է տալիս առանց դժվարությունների զբաղվել գործարարությամբ, աշխատանք գտնել և այլն: • Հավասար հնարավորություններ. հասարակության սոցիալապես խոցելի անդամները բարեկեցության հասնելու մեծ հնարավորություններ ունեն, նրանց հասանելի են հանրային ծառայությունները՝ կրթությունը, ենթակառուցվածքները և այլն: • Ներառական տնտեսության կարևոր տարրերից են նաև ներդրումը մարդկային կապիտալում (կրթություն, առողջապահություն), աշխատատեղերի ստեղծումը, պրոգրեսիվ

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		հարկային քաղաքականությունը (հարուստները վճարում են ավելի շատ), սոցիալական պաշտպանությունը, խտրականության վերացումն ու ուժեղ ինստիտուտները: Ներառական տնտեսությունը պետք է լինի կայուն, որ մարդիկ վստահություն ունենան ապագայի հանդեպ:
121	**Տնտեսություն շրջանաձև**	Փակ ցիկլերի սկզբունքով գործող տնտեսական մոդել, որի դեպքում հումքը, արտադրանքը և դրա բաղադրիչները հնարավորինս քիչ են կորցնում իրենց արժեքը, օգտագործվում են վերականգնվող էներգիայի աղբյուրները (օրինակ՝ արև, քամի), իսկ հիմքում ընկած է համակարգային մտածելակերպը: Այն բնութագրվում է որպես ռեսուրսների օգտագործման համակարգ, որտեղ գերակայում են կրճատումը, տարրերի վերամշակումը և վերաօգտագործումը: Շրջանաձև տնտեսության գաղափարը հիմնված է 3R սկզբունքի վրա. • Կրճատում՝ հումքի նվազագույն չափով օգտագործում (Reduce), • Վերաօգտագործում՝ արտադրանքի և տարրերի կրկին օգտագործում (Reuse), • Վերամշակում (Recycle): Շրջանաձև տնտեսությունը համակարգային փոփոխություն է, որը միտված է երկարատև կայունության, նոր գործարար ու տնտեսական հնարավորությունների ձևավորմանը և ապահովում է էկոլոգիական ու սոցիալական մեծ օգուտներ: Այն նպատակ ունի փոխարինել ներկայիս գծային տնտեսությունը, որը հիմնված է «Վերցրու՛, օգտագործի՛ր, դեն նետի՛ր» համակարգի վրա: Վերջինիս շրջանակներում օգտակար հանածոներն արդյունահանվում են, վերածվում արդյունաբերական արտադրանքի, իսկ օգտակար օգտագործման ժամկետի ավարտից հետո դեն նետվում:

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
122	**Փարիզյան համաձայնագիր**	Միջազգային փաստաթուղթ, որն ընդունվել է Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում 2015 թվականի դեկտեմբերին՝ ի հավելումն ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջադարձային կոնվենցիային: Համաձայնագիրը ստորագրվել է 2016 թվականի դեկտեմբերի 22-ին Նյու Յորքում: Փարիզյան համաձայնագիրը վավերացվել է Միավորված Ազգերի Կազմակերպության անդամ 96 պետությունների (այդ թվում և Հայաստանի) կողմից: Համաձայնագիրը փոխարինել է 1997 թվականի դեկտեմբերին Ճապոնիայում կնքված Կիոտոյի արձանագրությունը: Ըստ Համաձայնագրի երկրորդ հոդվածի՝ այն պետք է արագացնի ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջադարձային կոնվենցիայի նախաձեռնությամբ իրականացվող գործողությունները, մասնավորապես՝ սահմանափակի գլոբալ միջին ջերմաստիճանային աճը մինչև 2°C-ից ցածր, քան նախաարդյունաբերական մակարդակը, մինչև այս դարի վերջը, և շարունակի ջանքերը սահմանափակելու այն մինչև 1,5°C:
123	**Քաղաքացիական հասարակություն**	Ժողովրդավարության պայմաններում հանրային կյանքի կազմակերպման ձև, որին բնորոշ են. 1) կամավորության սկզբունքով ձևավորված ոչ պետական, ոչ առևտրային կառույցների (հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ, ստեղծագործական միավորումներ, բարեգործական կազմակերպություններ, քաղաքացիական շարժումներ ու ակտիվության այլ ձևեր) ցանց և 2) տնտեսական, քաղաքական, սոցիալական, հոգևոր, մշակութային ոչ պետական հարաբերությունների ընդգրկուն համակարգ: Լայն իմաստով՝ հանրային կյանքի կազմակերպման ու կառավարման եղանակ, որտեղ կենտրոնական արժեքը, հիմնական գործող սուբյեկտը և վերջնական նպատակը մարդ-քաղաքացին է՝ իր շահերով, պահանջմունքներով ու իրավունքներով:
124	**Օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ-ներ)**	Ներդրման տեսակ, որն իրենից ներկայացնում է որևէ երկրում բիզնեսի վերահսկման իրավունքի տիրապետում մեկ ուրիշ երկրում գտնվող կազմակերպության կողմից: ՕՈՒՆ-ները սովորաբար

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		ենթադրում են կառավարման մեջ մասնակցություն, համատեղ ձեռնարկատիրություն, տեխնոլոգիայի և փորձի փոխանակում: Օտարերկրյա ուղղակի ներդրողը կարող է որևէ տնտեսությունում կազմակերպության մեջ քվեարկման իրավունք ձեռք բերել հետևյալ կերպ՝ • դուստր ձեռնարկության կամ ընկերության ստեղծման միջոցով, • ներդրողի հետ կապված կազմակերպության բաժնետոմսերի ձեռքբերմամբ, • ներդրողի հետ կապ չունեցող կազմակերպության միաձուլման կամ միավորման միջոցով, • այլ ներդրողի կամ կազմակերպության հետ համատեղ ձեռնարկատիրության կապիտալի մեջ մասնակցությամբ:
125	**Օրենքի գերակայություն**	Իրավական կատեգորիա, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող բարձր դասվել օրենքից, բոլորը հավասար են օրենքի առաջ, ոչ ոք չի կարող պատժվել պետության կողմից՝ բացառությամբ օրենքի խախտման և օրենքով սահմանված կարգի: Օրենքի գերակայություն նշանակում է, որ բոլոր ենթաօրենսդրական ակտերը և այդ ակտերի կիրառումը չպետք է հակասեն օրենքին: Օրենքի գերակայությունը ներառում է նաև այն պահանջը, որ բոլոր նորմատիվ իրավական ակտերը և պետական իշխանության բոլոր գործողությունները ենթակա են արժանապատվության, ազատության և մարդու իրավունքների պաշտպանության: Օրենքի գերակայությունը հակադրվում է այն գաղափարին, որ անհատ պաշտոնյաները կարող են օրենքից դուրս լինել կամ չափազանց մեծ լիազորություններ ունենալ և այդպիսով հնարավորություն ունենալ կամայական գործողությունների: Այն պահանջում է արդարադատության համակարգի մատչելիություն և դրա անկախություն գործադիր և օրենսդիր իշխանության մարմիններից, որպեսզի դատավորները կարողանան որոշումներ կայացնել միայն փաստերի և օրենքների հիման

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		վրա: Հասարակության անդամները պետք է կարողանան մասնակցել իրենց վարքագիծը կարգավորող օրենքների ստեղծմանը և փոփոխություններին:
126	Օրինականություն	Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունք, որը ենթադրում է պետական մարմինների, պաշտոնատար անձանց, քաղաքացիների և վերջիններիս կողմից ձևավորված հասարակական կազմակերպությունների կողմից օրենքների և դրանց համապատասխանությամբ այլ իրավական ակտերի անշեղ կատարում: Իրավական օրինականության պետական իշխանությունից պահանջում է իրավունքի արտացոլումն օրենքներում:
127	Ֆիդուցիար պարտականություն	Անձի պարտականություն գործել ի շահ այլ անձի՝ դրսևորելով բարեխղճություն և ողջամտություն:
128	ESG	Անգլերեն երեք բառերի՝ “environmental, social, governance” (շրջակա միջավայր, սոցիալական հարցեր, կառավարում) հապավում, որն ուղենշում է ժամանակակից ընկերության գործելաոճը՝ հիմնված այն գիտակցման վրա, որ շրջակա միջավայրի, սոցիալական և պատշաճ կառավարման հիմնախնդիրները կարող են ազդել ընկերության՝ արժեք ձևավորելու կարողության վրա: ESG հնարավորություն է տալիս բիզնեսի վարման կարճաժամկետ մոտեցումներից անցում կատարել երկարաժամկետի՝ ձգտելով միջավայրի, որը կխրախուսի ներառական տնտեսական աճը, կլինի սոցիալապես արդար և բնապահպանական առումով մաքուր ու անվտանգ: ESG դեպի կայուն զարգացումը կողմնորոշված բիզնեսի վարման եղանակ է, որի առանցքն են էթիկական առաջնորդումն ու պատշաճ կառավարումը, հասարակության և շրջակա միջավայրի վրա ընկերության գործունեության ազդեցության գնահատումն ու կառավարումը և կատարողականի թափանցիկության ապահովումը:
129	E բաղադրիչ	Շրջակա միջավայրի հետ կապված հարցեր, այդ թվում՝ կլիմայի փոփոխություն, բնական ռեսուրսների և էներգակիրների օգտագործում, շրջակա միջավայրի աղտոտում ու թափոնների

#	ԵԶՐՈՒՅԹ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
		կառավարում, կենսաբազմազանություն, օդի և ջրի որակ, մաքուր տեխնոլոգիաների, վերականգնվող էներգիայի օգտագործում և այլն:
130	S բաղադրիչ	Սոցիալական հարցեր, այդ թվում՝ մարդկային կապիտալի զարգացում, աշխատակիցների բազմազանություն, ներառականություն, աշխատանքային չափորոշիչներ, մարդու իրավունքներ, հաճախորդների գոհունակություն, արտադրանքի և տվյալների անվտանգություն և այլն:
131	G բաղադրիչ	Պատշաճ կառավարման հարցեր, այդ թվում՝ խորհրդի բազմազանություն, գործադիր մարմնի վարձատրություն, գործարար էթիկա, հակակոռուպցիոն համապատասխանություն, թափանցիկություն, հաշվետվողականություն և այլն:

Շտեմարանը մշակվել է

Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի կողմից

Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի (www.cipe.org)

«Եվրասիա. ձևավորել բարենպաստ պայմաններ կառուցողական կապիտալի համար, 2-րդ փուլ»

դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

(+374 99) 444 442
corpgov@corpgov.am
www.corpgov.am